Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
Կոալիցիա

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի 19.12.2018-09.12.2019 թթ. ժամանակահատվածի գործունեության

ԵՐԵՎԱՆ 2019Թ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. **ԲԱԺԻՆ 1. Կոալիցիայի հաշվետու ժամանակահատվածի գործունության արդյունքները՝**
   - Կոալիցիայի կառավարման խորհրդի նիստեր, հայտարարություններ, միջոցառումներ.
   - Ուսումնասիրություններ, վերլուծություններ, կարծիք-դիրքորոշումներ, առաջարկություններ.
2. **ԲԱԺԻՆ 2. Կոալիցիայի հաշվետու ժամանակահատվածի գործունության հիմնական ուղղությունները**
   - Կոալիցիայի ներգրավվածությունն ու ազդեցությունը ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի մշակման գործընթացում.
   - Կոալիցիայի որդեգրած դիրքորոշումները Ռազմավարությամբ նախատեսված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի տարանջատված մոդելի ներդրման ուղղությամբ առաջարկվող լուծումների վերաբերյալ.

## ԲԱԺԻՆ 1.
## Կոալիցիայի հաշվետու ժամանակահատվածի գործունեության արդյունքները

### ➢ Կոալիցիայի կառավարման խորհրդի նիստեր, հայտարարություններ, միջոցառումներ.

- 2019 թվականի հունվարի 9-ին Կոալիցիան հանդես է եկել հայտարարությամբ «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի» նախագծի (այսուհետ՝ Ռազմավարության նախագիծ) վերաբերյալ: Կոալիցիան ողջունել է 2018 թվականի դեկտեմբերի 19-ին Կոալիցիայի քարտուղարությունը համակարգող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի և ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ կազմակերպված Ռազմավարության նախագիծ) հանրային քննարկումն ու ՀՀ արդարադատության նախարարության պատրաստակամությունը՝ կառուցողական դաշտում երկխոսելու և Ռազմավարության նախագծի լրամշակման մասնակցային և թափանցիկ գործընթաց ապահովելուն ուղղված ջանքերը: Կոալիցիան դրական է գնահատել նաև Կառավարության՝ ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության կայացրած որոշումը, որով երկարաձգվել է Ռազմավարության նախագծի e-draft.am կայքում հանրային քննարկումների ժամկետը, այն սահմանելով մինչև 2019 թվականի հունվարի 31-ը https://armla.am/40296.html:
- 2019 թվականի հունվարի 30-ին տեղ է ունեցել Կոալիցիայի կառավարման խորհրդի նիստը, որի ընթացքում միաձայն քվեարկությամբ կոալիցիայի կառավարման խորհրդի նախագահ է ընտրվել **Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության ներկայացուցիչ Արկադի Սահակյանը:** Նիստի ընթացքում հաստատվել է Կոալիցիայի 2019-2023 թվականների Ռազմավարական պլանի նախագիծը, ինչպես նաև Կոալիցիայի կազմում ստեղծվեց Հայաստանում անցումային արդարադատության հարցով հանձնաժողովը: Հանձնաժողովի նախագահ ընտրվեց Տնտեսական իրավունքի կենտրոնի նախագահ Մովսես Արիստակեսյանը: Կոալիցիայի կազմում ստեղծվեց նաև հանձնախումբ, որը կզբաղվի Կոալիցիայի անդամության զարգացման հարցերով: Հանձնախմբի նախագահ ընտրվեց Երիտասարդ բժիշկների ասոցիացիայի հիմնադիր Գևորգ Գրիգորյանը: Նիստի ընթացքում հաստատվեց Ռազմավարության նախագծի վերաբերյալ Կոալիցիայի առաջարկությունները և հանձնարարվեց Կոալիցիայի քարտուղարությանը դրանք ամփոփող փաստաթուղթն ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն՝ https://armla.am/40837.html:
- 2019թ. փետրվարի 13-ին Կոալիցիայի քարտուղարությունը հանդես է եկել հայտարարությամբ՝ **ԱԺ-ի կողմից հաստատված ՀՀ կառավարության ծրագրի կոռուպցիայի դեմ պայքարի դրույթների վերաբերյալ** կոչ անելով ՀՀ գործադիր և օրենսդիր իշխանություններին կոռուպցիայի դեմ իրադրային լուծումներով պայքար մղելու նախորդ իշխանությունների պրակտիկան ներցիայով չշարունակել և բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ երկրում հակակոռուպցիոն պայքարն օր առաջ ինստիտուցիոնալիզացնելու միասնական և փոխհամաձայնեցված օրակարգ

ձևավորել: Միաժամանակ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան հայտնում է իր պատրաստակամությունը կազմակերպելու և անցկացնելու վերը նշված մասնագիտական քննարկումները՝ https://armla.am/41041.html:

- 2019թ. ապրիլի 17-18-ին Երևանում ՀՀ արդարադատության նախարարության, Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Կոալիցիայի կողմից Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում և ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի ու Միջազգային մասնավոր ձեռնարկությունների կենտրոնի (CIPE) հետ համագործակցությամբ **անցկացվել է «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ միջազգային փորձի ներքո» խորագրով կառավարություն-քաղաքացիական հասարակություն փորձագիտական միջազգային համաժողովը,** որին մասնակցել են Կոալիցիայի անդամ հանդիսացող հասարակական կազմակերպություններ, իսկ Կոալիցիայի կառավարման խորհրդի նախագահ Արկադի Սահակյանը հանդես է եկել ելույթով՝ https://armla.am/42019.html: Համաժողովի ամփոփումը կարող եք գտնել հետևյալ հղմամբ՝ https://armla.am/43426.html:
- 2019 թվականի հունիսի 5-ին Կոալիցիան հայտարարություն է տարածել «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝ կոչ անելով ՀՀ առողջապահության նախարարությանը ծավալել հանրային քննարկումներ հիշյալ նախագծի վերաբերյալ և վերջնական քննարկման ներկայացնել մի նախագիծ, որը հիմնված կլինի հանրային համաձայնության վրա՝ https://armla.am/43376.html:
- 2019 թվականի հունիսի 14-ին Կոալիցիայի կառավարման խորհուրդն իր մտահոգությունն է հայտնել ՀՀ-ում տարբեր ոլորտներում քաղաքականությունների մշակման ու իրականացման գործընթացում քաղաքացիական հասարակության հետ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ համագործակցության արդի իրավիճակի կապակցությամբ՝ https://armla.am/43565.html:

  Նույն օրը Կոալիցիայի կառավարման խորհուրդը քննարկել է նաև **«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և կից ներկայացված մի շարք օրենսդրական նախաձեռնություններ** և մտահոգություն արտահայտել, որ եկամտային հարկի համահարթեցման առաջարկությունը հանգեցնելու է ցածր աշխատավարձ ստացողների կողմից տնօրինվող եկամտի անուղղակի փոքրացմանը՝ https://armla.am/43551.html:
- 2019 թվականի հունիսի 25-ին Կոալիցիան հանդես են եկել հայտարարությամբ՝ դատապարտելով **«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (Պ-1335-08.05.2019-ՊԻ-011/0),** առաջարկվող կարգավորումները, որը շրջանառության մեջ է դրվել ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի կողմից՝ https://armla.am/43693.html:
- 2019 թվականի հունիսի 27-ին գումարվել է Կոալիցիայի կառավարման խորհրդի արտահերթ նիստը, հաշվի առնելով Կոալիցիայի կառավարման խորհրդի մի շարք անդամների առաջարկությունները: Նիստում քննարկվել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ

կատարելու» ՀՀ օրենքի նախագծի, որը հունիսի 25-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց առաջին ընթերցմամբ, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2019 թ-ի հունիսի 24-ի N 808-Ն որոշման հետ կապված հարցեր՝ https://armla.am/43849.html:

- 2019 թվականի հուլիսի 3-ին Կոալիցիայի կառավարման խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ՝ արտահերթ նիստի օրակարգային հարցերի շուրջ: **Առաջին.** անընդունելի համարվել, որ Ազգային ժողովը, հաշվի չառնելով Կոալիցիայի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ 25.06.2019թ.-ին արտահայտված մտահոգությունները, նույն օրն առաջին ընթերցմամբ ընդունել է այն, **երկրորդ.** ՀՀ վարչապետի 2019 թ.-ի հունիսի 24-ի «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու ...» N 808-Ն որոշման վերաբերյալ, գտնելով, որ որևէ կերպ հիմնավորված չէ Խորհրդի կազմից Կոալիցիային արհեստականորեն դուրս թողնելու մոտեցումը, ուստի Կոալիցիայի կառավարման խորհրդի կազմակերպությունները նպատակահարմար չեն գտնում 2019 թ.-ի հունիսի 24-ի թիվ 808-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերով մասնակցել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին ՔՀԿ-ների անդամության համար կազմակերպվող մրցույթին և առաջարկում է Կոալիցիայի անդամ մյուս ՔՀԿ-ներին ևս որդեգրել այդ մոտեցումը:
- 2019 թվականի հուլիսի 17-ին Կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ Մովսես Արիստակեսյանը և իրավաբան-փորձագետ Արտյոմ Մեսրոպյանը ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի վերանայման երկրորդ փուլի շրջանակներում Հայաստանի կողմից կոնվենցիայի 2-րդ (կանխարգելման միջոցներ) և 5-րդ (ակտիվների վերականգնում) գլուխների իրականացման գնահատում իրականացնող խմբի անդամներին են ներկայացրել Հայաստանում ընթացող հակակոռուպցիոն գործընթացների վերաբերյալ իրենց դիրքորոշումներն ու մտահոգությունները՝ https://armla.am/44204.html:
- 2019 թվականի հուլիսի 24-ին Էջմիածնի քաղաքապետարանում Իրավաբանների հայկական ասոցիացիան՝ ՀՀ արդարադատության նախարարության, Էջմիածնի քաղաքապետարանի և Հայաստանի համայնքների միության գործընկերությամբ, կազմակերպել է «Կոռուպցիայի կանխարգելման գործիքակազմի ներդրումը տեղական ինքնակառավարման մարմիններում. միջազգային փորձն ու առաջիկա անելիքները» խորագրով քաղաքացիական հասարակություն-տեղական ինքնակառավարման մարմիններ համաժողովը, որի ընթացքում ներկայացվել է ՏԻՄ-երում հակակոռուպցիոն ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի ներդրման հնարավորությունները, ՏԻՄ-երում կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային փորձը, տեղական և տարածքային մակարդակով կոռուպցիայի կանխարգելման և էթիկայի ապահովման հետ կապված ԵԽ մեխանիզմները և այլն՝ https://armla.am/44298.html:
- 2019 թվականի սեպտեմբերի 16-ին ԻՀԱ-ի և Կոալիցիայի իրավաբան-փորձագետներ Նարեկ Ենոքյանն ու Արտյոմ Մեսրոպյանը մասնակցել են «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) պատվիրակության փորձագետների հետ, ովքեր Հայաստան են ժամանել

Արդարադատության նախարարության հրավերով՝ դատաիրավական բարեփոխումների օրենսդրական նախագծերի փաթեթների վերաբերյալ կարծիք ներկայացնելու նպատակով: Փորձագետները Վենետիկի հանձնաժողովի պատվիրակության անդամներին մանրամասն ներկայացրել են ԱԺ-ի կողմից մի քանի օր առաջ երկրորդ ընթերցմամբ ընդունված կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորմանը առնչվող օրենսդրական նախագծի խնդրահարույց կարգավորումները՝ ուշադրություն հրավիրելով այն հանգամանքի վրա, որ դրանով փորձ է արվում քաղաքականացնել հանձնաժողովի ձևավորմանը գործընթացն ու կասկածի տակ է դնում մասնագիտական անաչառությունը և անկախությունը, ինչը չի բխում նաև միջազգային հանրաճանաչ սկզբունքներից՝ https://armla.am/44761.html:

- 2019 թվականի դեկտեմբերի 5-ին կայացել է Կոալիցիայի կառավարման խորհրդի հերթական նիստը: Ըստ օրակարգի քննարկվեց և բավարարվեց Կոալիցիային՝ անդամակցության հայտ ներկայացրած երեք ՀԿ-ների դիմումները, ինչպես նաև Կոալիցիայի արդիականացման շրջանակներում Կոալիցիայի անդամության ինստիտուտի զարգացման հանձնախմբի կողմից կատարած աշխատանքների և ներկայացրած առաջարկությունների արդյունքում Կոալիցիայի անդամ 99 ՔՀԿ-ների ցանկից դուրս հանվեցին 31 կառույցեր, և արդյունքում, 3 նոր ՔՀԿ-ների միանալուց հետո Կոալիցիայի անդամների թիվը դարձավ 71:

## ➢ ՈՒսումնասիրություններ, վերլուծություններ, կարծիք-դիրքորոշումներ, առաջարկություններ.

- 2019թ. հունվարի 31-ին Կոալիցիայի քարտուղարությունը Ռազմավարության նախագծի վերաբերյալ կարծիք-դիրքորոշում և առաջարկությունները տեղադրել է e-draft.am կայքում, ինչպես նաև թղթային տարբերակով ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն՝ https://armla.am/40874.html: Ռազմավարության նախագծի վերաբերյալ կարծիք-դիրքորոշում և առաջարկություններ-ում ներկայացրել է նաև հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մաս կազմող **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծում և բնականոն գործունեության ապահովում (Միջոցառում 7) Կոռուպցիոն հանցագործությունների քննության, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործություններով օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման գործառույթները գործող մեկ մարմնում կենտրոնացնելու կամ նոր մարմին ստեղծելու և վերջինիս վերապահելու հարցի դիտարկում (Միջոցառում 52)՝** առաջարկվում է **անկախ հակակոռուպցիոն ունիվերսալ մարմնի ստեղծում,** որն օժտված կլինի կոռուպցիայի կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և նախնական քննության և օպերատիվ-հետախուզական գործառույթներով և լիազորություններով:
- 2019թվականի փետրվարի 14-ին Կոալիցիան և ԻՀԱ-ն **կազմել են հակիրճ տեղեկանք հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ներդման վերաբերյալ՝ առաջարկելով ստեղծել անկախ հակակոռուպցիոն ունիվերսալ մարմին՝ https://armla.am/41505.html:**
- 2019 թվականի մարտի 3-ին Կոալիցիան և ԻՀԱ-ն կազմել են **Այլընտրանքային ընթացիկ զեկույց՝** ՏՀԶԿ ՍՀԳ շրջանակներում Հայաստանի վերաբերյալ չորրորդ փուլի զեկույցի կատարման ընթացքի մասին՝ https://armla.am/41515.html:

- 2019 թվականի հունիսի 3-ին Կոալիցիան և ԻՀԱ-ն ներկայացրել են կարծիքը և առաջարկությունները «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի վերաբերյալ՝ https://armla.am/43334.html:
- 2019 թվականի օգոստոսի 12-ին Ռազմավարության լրամշակված նախագծի վերաբերյալ Կոալիցիան և ԻՀԱ-ն վերանայելով վերոնշյալ հակիրճ տեղեկանքը, մշակել են նոր տեղեկանք, որում ներկայացվել է **կենտրոնացված հակակոռուպցիոն համակարգի առավելությունները, ապակենտրոնացված համակարգի թերությունները և համընդհանուր չափանիշներ**, որոնք պետք է ունենա հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը՝ անկախ մոդելի ընտրության տեսակից՝ https://armla.am/44513.html:
- 2019 թվականի օգոստոսի 12-ին Ռազմավարության լրամշակված նախագծի վերաբերյալ Կոալիցիան և ԻՀԱ-ն ներկայացրել են կարծիք-դիրքորոշումը և առաջարկություններ՝ https://armla.am/44519.html:
- 2019թվականի օգոստոսի 26-ին Կոալիցիան և ԻՀԱ-ն ներկայացրել են Կարծիք, դիտողություններ և առաջարկություններ՝ Դատական օրենսգրքի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի և հարակից այլ օրենքների նախագծերի վերաբերյալ՝ https://armla.am/44548.html
- 2019 թվականի սեպտեմբերի 25-ին Կոալիցիան և ԻՀԱ-ն e-draft.am ներկայացրել են փորձագիտական կարծիք, դիտողություններ և առաջարկություններ՝ **«ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ՝ https://armla.am/44826.html:**
- 2019 թվականի սեպտեմբերի 25-ին Կոալիցիան և ԻՀԱ-ն e-draft.am ներկայացրել են Փորձագիտական կարծիք, դիտողություններ և առաջարկություններ՝ **«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի և հարակից այլ օրենքների նախագծերի վերաբերյալ**՝ https://armla.am/44822.html:
- 2019 թվականի հոկտեմբերի 4-ին Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության նախագահին՝ ՀՀ ԱԺ-ի կողմից 13.09.2019թ.-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը չստորագրելու մասին՝ https://armla.am/45040.html:
- 2019 թվականի հոկտեմբերի 25-ին Կոալիցիան և ԻՀԱ-ն ներկայացրել են փորձագիտական կարծիք 13.09.2019թ. -ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի վերաբերյալ՝ https://armla.am/45330.html:

## ԲԱԺԻՆ 2.

## Կոալիցիայի հաշվետու ժամանակահատվածի գործունեության հիմնական ուղղությունները

- **Կոալիցիայի ներգրավվածությունն ու ազդեցությունը ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի մշակման գործընթացում.**

Սկսած 2018 թվականի դեկտեմբերի 19-ից, երբ ՀՀ արդարադատության նախարարությունը առաջին անգամ հրապարակեց Ռազմավարության նախագիծը, մինչ ՀՀ կառառավարության կողմից սույն թվականի հոկտեմբերի 3-ի նիստում Ռազմավարությունը հաստատումը, Կոալիցիան և ԻՀԱ-ն ակտիվ ներգրավվածություն են ունեցել ինչպես Ռազմավարության նախագծի լրամշակման և վերջնական տեսքի բերման գործընթացներում, այնպես էլ գործուն աջակցություն են ցուցաբերել, որպեսզի Ռազմավարության նախագիծն անցնի հանրային ակտիվ քննարկումների շարք, որպեսզի վերջնարդյունքում ունենայինք ***հանրության լայն շրջանակների համար ընդունելի կոնսենսուսային փաստաթուղթ:***

Ստորև հակիրճ կներկայացնենք վերոնշյալ գործընթացնում Կոալիցիայի և ԻՀԱ-ի ակտիվ ներգրավվածությունը հիմնավորող արդյունքային ցուցանիշները: Այսպես.

- Ռազմավարության նախագծի մշակման ամբողջ ժամանակահատվածում Կոալիցիայի և ԻՀԱ-ի կողմից ԵՄ ԿԵՀ ծրագրի շրջանակներում ներկայացվել է **թվով 133 առաջարկություն, որից 101-ը ընդունվել են ամբողջությամբ և մասամբ, ինչպես նաև ի գիտություն, չի ընդունվել առաջարակներից ընդամենը 31-ը:**
- Ռազմավարության նախագծի մշակման ամբողջ ժամանակահատվածում Կոալիցիան և ԻՀԱ-ն կազմակերպել են Ռազմավարության նախագծի հանրային քննարկումների **թվով 5 միջոցառում, որից 3-ը մարզերում, իսկ 2-ը Երևան քաղաքում:**
- 2019թ. ապրիլի 17-18-ին Երևանում Կոալիցիային և ԻՀԱ-ն՝ ԵՄ ԿԵՀ ծրագրի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության և ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի ու Միջազգային մասնավոր ձեռնարկությունների կենտրոնի (CIPE) հետ համագործակցությամբ կազմակերպել է **«ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ միջազգային փորձի ներքո» խորագրով կառավարություն-քաղաքացիական հասարակություն փորձագիտական միջազգային համաժողովը:**

**Ռազմավարության ուժեղ կողմերն են.**

- Ռազմավարությունը մշակվել է շահագրգիռ կողմերի լայն ներգրավվածությամբ և անցել է հանրային լայն քննարկումների շարք, ինչն իրավունքի հիմունքներ է ստեղծում, օգնում է ապահովել որդեգրված Ռազմավարության ընդունելիությունն ու արդյունավետությունը: Նման ներառական մոտեցումը լիովին համապատասխանում է Հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ Կուալա Լումպուրի հայտարարությանը:[1]
- Ռազմավարությամբ առաջին անգամ ուրվագծվել է Հայաստանի հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մոդելն ու դրանում ներառված մարմինները,

[1] Հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ Կուալա Լումպուրի հայտարարությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://armla.am/40565.html:

- Ռազմավարության միջոցառումների 3 կարևորագույն հենասյուների վրա՝ կոռուպցիայի կանխարգելում, կոռուպցիոն գործերի քննություն (կամ պատժի անխուսափելիության ապահովում) հանրային իրազեկում և հակակոռուպցիոն կրթության, ինչը վկայում է, որ Ռազմավարությամբ համակարգային մոտեցում է որդեգրվել կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար մղելու համար:
- Իրականացվել է Ռազմավարության և միջոցառումների ծրագրով պայմանավորված ծախսերի վերլուծություն և տրվել է ֆինանսական գնահատական: Հաշվարկները կատարվել են՝ օգտագործելով միջին կամ տիպային ծախսային մոդուլների գործիքը: Ռազմավարության և դրանից բխող միջոցառումների ծրագրի ֆինանսական կայունությունը երաշխավորված է Ռազմավարության նպատակներից բխող միջոցառումների ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից ֆինանսական միջոցների տրամադրման միջոցով: Ռազմավարության ընդհանուր կարիքների ֆինանսական գնահատականը կազմել է 16,528,044.4 հազար ՀՀ դրամ:

**Ռազմավարության թույլ կողմերն են՝**

- Իրավասու պետական մարմինների կողմից չի իրականացվել նախորդ՝ **ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի արդյունքների պատշաճ գնահատում**, այսինքն **հակակոռուպցիոն քաղաքականության ընթացի իրավիճակի վերլուծությունն իրականացվել է հատվածական**: Ռազմավարության համաձայն՝ դրանք մի քանիսն են՝ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի բացակայություն, քաղաքական բավարար կամքի բացակայությունը, ընթացիկ մոնիթորինգի կառուցակարգի բացակայություն: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ ըստ ռազմավարական ուղղությունների, այնուամենայնիվ, եղել են մշակված հստակ ցուցիչներ[2] սակայն ընթացիկ հաշվետվությունների համապարփակ ուսումնասիրություն և միջոցառումների իրականացման մակարդակի պարբերական գնահատումներ չեն իրականացվել:
- Թեև Ռազմավարությամբ Կառավարությունը որդեգրել է **հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի տարանջատված մոդել ունենալու տեսլականը՝** վերջինիս արդարացման դեպքում ունիվերսալ մոդելին անցում կատարելու հնարավոր հեռանկարով, այնուամենայնիվ, առաջարկվող լուծումներով քաղաքական իշխանությունը չի երաշխավորում հակակոռուպցիոն համակարգերի անկախությունը և ապաքաղաքականացվածությունը[3]:

---

[2] ՀՀ կառավարության 2015թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշման մեջ, որով հաստատվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը, 2018 թվականի հունվարի 18-ի N 133-Ն որոշմամբ կատարվել են լրացումներ՝ որոշումը լրացնելով NN 3, 4, 5 և 6 հավելվածներով, որոնցով հաստատվել են պետական եկամուտների հավաքագրման, ոստիկանության կողմից քաղաքացիներին ծառայությունների մատուցման, առողջապահության և կրթության ոլորտներում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված **միջոցառումների ծրագիրը և դրանց մոնիթորինգի և գնահատման ցուցանիշները՝** https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=119778 :

[3] Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի տարանջատված մոդելի ներդրման ուղղությամբ առաջարկվող լուծումներին կարող եք ծանոթանալ հետագա շարադրանքում:

- Ռազմավարության միջոցառումների ծրագրի 5-րդ բաժինը նվիրված է Ռազմավարության մշտադիտարկմանը, հսկողությանն ու դրա վերաբերյալ հանրային հաղորդակցությանը, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մեկ միջոցառում: Ըստ այդ միջոցառման՝ Ռազմավարության մշտադիտարկումն իրականացվելու է միայն **հարցումների եղանակով**, որոնք նախատեսվում է անցկացնել տարեկան առնվազն 1 անգամ, ինչը, իհարկե, չի կարող երաշխավորել արդյունավետ մոնիթորինգի իրականացումը, քանի որ այդ եղանակը, ընդհամենը, մոնիթորինգի իրականացման գործիքներից մեկն է:: Ավելին նույն միջոցառմամբ նախատեսվում է 2019 թվականին մշակել կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման մեթոդաբանություն և նոր 2020 թվականին իրականացնել հարցումներ, մինչդեռ հարկ է նշել, որ Ռազմավարությամբ նախատեսվում է մի շարք գործողություններ իրականացնել հենց 2019 թվականին:

## ➢ Կոալիցիայի որդեգրած դիրքորոշումները Ռազմավարությամբ նախատեսված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի տարանջատված մոդելի ներդրման ուղղությամբ առաջարկվող լուծումների վերաբերյալ.

Թեև Կառավարության կողմից վերջերս է ընդունվել Ռազմավարությունը, որով, ի թիվս այլնի, ուրվագծվեց նաև **Հայաստանի հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մոդելն ու դրանում ներառված մարմինները**, այնուամենայնիվ, նախքան Ռազմավարության ընդունումը՝ թե՛ Կառավարության, և թե՛ Ազգային ժողովի կողմից որոշակի քայլեր են ձեռնարկվել ինստիտուցիոնալ համակարգի մարմինների կազմավորման ուղղությամբ: Ստորև անդրադարձ է կատարվել ինստիտուցիոնալ համակարգի մաս կազմող Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) գործունեությունը կարգավորող օրենսդրական կարգավորումներին, ինչպես նաև դրանց ձևավորման ուղղությամբ Կառավարության և Ազգային ժողովի կողմից ձեռնարկված քայլերին՝ ներկայացնելով հիմնական զարգացումներն ու դրանից բխող խնդիրները:

Ա) <u>**Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով**</u>.

Ազգային ժողովը 13.09.2019թ.-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունեց ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի՝ պատգամավորական նախաձեռնության կարգով ներկայացրած «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք), որը դեռևս 25.06.2019թ.-ին առաջին ընթերցմամբ ընդունումից հետո արժանացել էր մասնագիտական հանրության, այդ թվում նաև՝ Կոալիցիայի փաստարկված քննադատությանը[4]:

Առաջինից երկրորդ ընթերցումն ընկած ժամանակահատվածում նախագիծը ենթարկվել է որոշակի փոփոխության և անկախ այն հանգամանքից, որ Կոալիցիան

[4] Կոալիցիայի 25.06.2019 թվականի և 03.07.2019 թվականի հայտարարությունները հասանելի են https://armla.am/43693.html և https://armla.am/44019.html հղումներով:

համապատասխան գրություններ էր ներկայացրել ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանին՝ հորդորելով հետ կանչել օրենքի նախագիծը, այն, առանց էական փոփոխությունների, ներկայացվել էր երկրորդ ընթերցման: Համապատասխան գրություններ էին ներկայացվել նաև ԱԺ բոլոր խմբակցությունների ղեկավարներին և միջազգային կառույցներին, քանի որ Կոալիցիան համարում էր, որ նախագծով նախատեսված իրավակարգավորումները **Հանձնաժողովի անդամների ընտրության գործընթացը դարձնում են քաղաքականացված, ոչ անաչառ, ոչ մասնագիտացված, ոչ թափանցիկ և վերահսկելի կառավարող քաղաքական իշխանության կողմից:**

Նման կարևորության իրավական ակտի նախագիծը չի ներկայացվել հանրային քննարկման՝ ոլորտի հիմնական դերակատարների մասնակցությամբ, ինչպես նաև չի ապահովել օրենքի նախագծի մշակման գործընթացում հիմնարար և պարտադիր իրավական գործընթացներ: Ավելին, Կոալիցիան առաջարկել էր նախքան երկրորդ ընթերցումը՝ ներկայացնել օրենքի նախագծի փորձաքննության արդյունքներն ու հիմնավորումը, հրատապ կարգով նախաձեռնել խորհրդարանական լսումներ՝ այն ոլորտի բոլոր դերակատարների մասնակցությամբ քննարկելու նպատակով, ստեղծել ԱԺ-ՔՀԿ-Կառավարություն աշխատանքային խումբ՝ հակակոռուպցիոն մարմնի հայկական մոդելի ներդրմանն ուղղված իրավական ակտերի նախագծերը մշակելու համար, որոնք նույնպես հաշվի չեն առնվել:

Տեղեկացնենք, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքը ընդունվել է 2017 թվականին, իսկ 2018 թվականի հունիսի 20-ին 6-րդ գումարման ԱԺ նախագահի թիվ Կ-195 կարգադրությամբ ձևավորվել է **Հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության մրցութային խորհուրդը**, որը մինչև 2019 թվականի հունվարին ձևավորված 7-րդ գումարման ԱԺ կազմավորումը, հրավիրել է նիստեր, կատարել մրցույթի կազմակերպման համար անհրաժեշտ զգալի չափով նախապատրաստական աշխատանքներ: Այնուհետև, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մրցութային խորհրդի աշխատանքների կանոնակարգման տեխնիկական մասը օրենքով դրված էր Ազգային ժողովի վրա, 2018 թվականի ապրիլ - մայիս ամիսներին տեղի ունեցած քաղաքական փոփոխություններից հետո մրցութային խորհուրդը **օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել** նիստեր գումարել և աշխատանքներ իրականացնել: Ապա, 2019 թվականի հունվարին ԱԺ նախագահի պաշտոնում ընտրված Արարատ Միրզոյանը, **հիմք ընդունելով միայն 7-րդ գումարման ԱԺ կազմավորման փաստը,** առանց որևէ իրավական հիմնավորման համապատասխան գրություններ է ուղարկել մրցութային խորհրդի կազմում անդամ նշանակելու իրավասություն ունեցող 5 մարմիններին[5]՝ մրցութային խորհրդի նոր անդամի թեկնածու առաջադրելու համար: Ի պատասխան՝ **այդ մարմինները կրկին ներկայացրել են արդեն գործող մրցութային խորհրդի կազմում ընդգրկված նույն անդամների թեկնածությունները, բացառությամբ Սահմանադրական դատարանի ներկայացուցչի**: Հիշյալը պայմանավորված էր նրանով, որ ՍԴ ներկայացուցիչը

[5] 09.06.2017 թվականին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Մրցութային խորհուրդը կազմված էր Սահմանադրական դատարանի նախագահի, Մարդու իրավունքների պաշտպանի, Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների, Հանրային խորհրդի և Փաստաբանների պալատի կողմից նշանակված մեկական անդամներից:

ընտրվել էր 7-րդ գումարման պատգամավոր, և վերջինս փոխարինվեց ՍԴ այլ ներկայացուցչով: Ավելին, iravaban.net լրատվական կայքի կողմից Ազգային ժողովի նախագահին ուղղված գրավոր հարցման պատասխանից պարզ է դարձել, որ Արարատ Միրզոյանի՝ ԱԺ նախագահ նշանակվելուց հետո մրցութային խորհրդի որևէ նիստ տեղի չի ունեցել, ինչը վկայում է, որ **ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը, ի սկզբանե չի ցանկացել աշխատել Խորհրդի գործող կազմի հետ, չի ընդունել Խորհրդի կողմից կատարված մեծածավալ աշխատանքի արդյունքները, և պարզելով, որ նոր Խորհրդում ներկայացված պետք է լինեն նույն անդամները՝ նախաձեռնել է Օրենքի նախագծի մշակումը:**

Ազգային ժողովի կողմից Օրենքի ընդունումից հետո Կոալիցիան 2019 թվականի հոկտեմբերի 4-ին դիմել է ՀՀ նախագահին՝ առաջարկելով չստորագրել Օրենքը և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ Օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով: Հիշյալը պայմանավորված է այն հանգամանքով, որ Օրենքի կանոնակարգումները հակասում են **ՀՀ կողմից վավերացրած միջազգային պայմանագրերին** (ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 5- րդ և 13-րդ հոդվածներ, ԵԽ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի 20-րդ հոդված), ՀՀ սահմանադրությանը (5-րդ հոդվածի 3-րդ մաս), **ՀՀ ստանձնած միջազգային հանձնառություններին, հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված բանաձևերին ու սկզբունքներին** (ԵԽ նախարարների կոմիտեի Կոռուպցիայի դեմ պայքարի 20 հիմնական սկզբունքների մասին թիվ (97) 24 բանաձևը (մասնավորապես՝ սկզբունք 3), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների շրջանակներում Հայաստանի վերաբերյալ չորրորդ փուլի զեկույցի 1-ին և 3-րդ հանձնարարականներ, Ջակարտայի սկզբունքներ)[6]:

Հիշեցնենք, որ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի մոնիթորինգի 4-րդ փուլի «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում» վերտառությամբ 2018 թվականի զեկույցով ՏՀԶԿ-ն Հայաստանին առաջարկել է. **«Ապահովել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների նշանակման թափանցիկությունն ու օբյեկտիվությունը, որը զերծ կլինի ցանկացած միջամտությունից, ներառյալ՝ քաղաքական, և որ գործընթացը կդիտվի որպես օբյեկտիվ հասարակության լայն շերտերի կողմից»:** Ուշագրավ է այն հանգամանքը, որ ոչ մրցութային կարգով Հանձնաժողովը ձևավորելու մասին Օրենքով առաջարկվող կանոնակարգումներին, **ի սկզբանե, դեմ էր նաև ՀՀ արդարադատության նախարարությունը:** Այս մասին հրապարակայնորեն հայտարարել են նախարարության ներկայացուցիչները՝ Ռազմավարության նախագծի հանրային քննարկումների ժամանակ: Այդուհանդերձ, 2019 թվականի օգոստոսի 9-ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից **ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքների նախագծերի մասին» օրենքում**

[6]Կոալիցիայի Հայաստանի ՀՀ նախագահին՝ ՀՀ ԱԺ-ի կողմից 13.09.2019թ.-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը չստորագրելու մասին դիմումին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://armla.am/45040.html :

**լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նոր նախագիծ**, որում, հետևելով Կոալիցիայի կոչին և առաջարկություններին՝ թեև վերականգնվել էր Հանձնաժողովի անդամների ընտրությունը մրցութային կարգով անցկացնելու և դա իրականացնելու համար մրցութային խորհուրդ ձևավորելու կարգավորումները, այնուամենայնիվ, Օրենքի նոր նախագծով նախատեսվում էր, որ **Հանձնաժողովի առաջին կազմը** ձևավորում է Ազգային ժողովը՝ Կառավարության, Ազգային ժողովի խմբակցությունների, Բարձրագույն դատական խորհրդի առաջադրած թեկնածուներից: Վերոնշյալ օրենսդրական փաթեթի վերաբերյալ 2019 թվականի հոկտեմբերի 11-12-ին տեղի ունեցած Վենետիկի հանձնաժողովի 120-րդ լիակատար նիստում ընդունված համատեղ եզրակացության[7] մեջ Վենետիկի հանձնաժողովը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի վերաբերյալ հայտնել է, որ **ոչ մրցութային կարգով Հանձնաժողովի ձևավորման ընթացակարգը կարելի է համարել «ժամանակավոր լուծում»** և երբ Հանձնաժողովը կսկսի գործել, ոչինչ չի խանգարում վերանայել գործող ընթացակարգը՝ թեկնածուների նշանակման **գործընթացի ավելի քիչ քաղաքականացված գործընթաց ապահովելու համար:** Վենետիկի հանձնաժողովը հիշյալ եզրակացությամբ իրավացիորեն այլ կարևոր հարցեր էլ է բարձրացրել, որոնք նույնպես նախկինում Կոալիցիայի կողմից ներկայացվել են[8] Կառավարության և Ազգային ժողովի քննարկմանը, բայց դրանք կրկին անգամ չեն ընդունվել քաղաքական իշխանության կողմից:

Տեղեկացնենք նաև, որ նախքան Վենետիկի հանձնաժողովի կողմից նշված օրենսդրական փաթեթի վերաբերյալ եզրակացության ընդունումը, 2019 թվականի սեպտեմբերի 18-ին Վենետիկի հանձնաժողովի փորձագետների հայաստանյան այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Կոալիցիայի իրավաբան-փորձագետները ներկայացրել են ԻՀԱ-ի և Կոալիցիայի տեսակետները Օրենքի խնդրահարույց կարգավորումների վերաբերյալ[9]:

Օրենքով՝ Հանձնաժողովը մրցութային կարգով ձևավորելու ընթացակարգի փոխարեն, առաջարկվում է **Հանձնաժողովի անդամների ուղղակիորեն առաջադրման ընթացակարգ՝ իշխանության երեք թևերի կողմից.** 1 անդամին առաջադրելու է **Կառավարությունը**, 2-րդին՝ **Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը**, 3-րդին և 4-րդին՝ **Ազգային ժողովի երկու ընդդիմադիր խմբակցությունները**, իսկ 5-րդին՝ **Բարձրագույն դատական խորհուրդը:**

Օրենքի ընդունումից հետո Ազգային ժողովը՝ առաջնորդվելով Օրենքի պահանջով, համաձայն որի՝ նախատեսվում էր **Հանձնաժողովի առաջին կազմը ձևավորել մինչև 2019 թվականի նոյեմբերի 30-ը,** սույն թվականի նոյեմբերի 19-ի նիստում ընտրել է

---

[7] Վենետիկի հանձնաժողովի 120-րդ լիակատար նիստում ընդունված համատեղ եզրակացությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ. https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2019)024- e&fbclid=IwAR2YqiVm3gfGuXGFdAoOJJ8xPwvQUtKbepj_gQHXPlP4tdLUdx5M5HLj2Qo

[8] ԻՀԱ-ի և Կոալիցիայի կարծիքը, դիտողությունները և առաջարկությունները՝ Դատական օրենսգրքի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի և հարակից այլ օրենքների նախագծերի վերաբերյալ կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ. https://armla.am/44548.html :

[9] Հանդիպման մասին տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://armla.am/44761.html :

**Հանձնաժողովի 5 անդամներին**, որոնցից ամենից շատ կողմ ձայներ ստացել էր Էդգար Շաթիրյանը[10]: Այնուհետև, նոյեմբերի 26-ին Հանձնաժողովի նորընտիր անդամները հրավիրել են Հանձնաժողովի առաջին նիստը, որի ժամանակ Հանձնաժողովի 5 անդամներից պետք է ընտրվեր Հանձնաժողովի նախագահ: Առաջադրված երկու թեկնածուներից՝ Հայկուհի Հարությունյան և Էդգար Շաթիրյան, Հանձնաժողովի անդամ ընտրվեց Հայկուհի Հարությունյանը, ինչից հետո **ԱԺ իշխող «Իմ քայլը» խմբակցության կողմից առաջադրված և ամենաշատ կողմ ձայներով Հանձնաժողովի անդամ ընտրված Էդգար Շաթիրյանը հրաժարական ներկայացրեց**՝ առկա իրողություններն անհամատեղելի համարելով պրոֆեսիոնալիզմի և թիմային աշխատանքի մասին իր պատկերացումներիս հետ[11], ինչը մեկ անգամ ևս փաստում է, որ Հանձնաժողովի ոչ մրցութային կարգով կազմավորումը ներկա իրողությունների համատեքստում ոչ ընդունելի և հնարավոր քաղաքական ազդեցության ռիսկերով ուղղորդվող գործընթաց է իրենից ներկայացնում:

Այսպես, թեև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված վերոնշյալ միջազգային փաստաթղթերում բացառիկության կարգով ընդգծվում է ներպետական մակարդակում այնպիսի մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, որոնք պետք է երաշխավորեն **հակակոռուպցիոն մարմինների կառուցվածքային, գործառութային և ֆինանսական անկախությունը՝ զերծ որևէ տեսակի ազդեցությունից, այդ թվում նաև՝ քաղաքական,** ինչպես նաև կարևորվում է **«անհրաժեշտ անկախության, ինքնուրույնության և ինքնավարության ապահովումն՝ առանց որևէ ազդեցության**, **այդ թվում՝ քաղաքական»**՝ հատուկ տեղ հատկացնելով կոռուպցիայի դեմ պայքարում **հասարակության լայն մասնակցությանը**, այդուհանդերձ՝ իրականությունը լիովին այլ է: Ներկայիս քաղաքական իշխանությունները ներկայացնելով ոչ հիմնավոր և սուբյեկտիվ պատճառաբանություններ, մասնավորապես՝ որ իրենց նման գործելաոճը պայմանավորված է **«Հանձնաժողովի հրատապ կազմավորման օբյեկտիվ անհրաժեշտությունից»**, ամեն կերպ իրենց քաղաքական ազդեցությունն ու իրավասությունները օգտագործեցին ոչ մրցութային կարգով ձևավորելով Հանձնաժողովը, ինչն, ի սկզբանե, չի երաշխավորում, ավելին, կասկածի տակ է դնում Հանձնաժողովի անդամների ապաքաղաքական դիրքորոշումը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեխղճությունն ու իրավասությունը:

Բ) <u>**Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ**</u>

2019 թվականի հունիսի 24-ին ՀՀ վարչապետի N 808-Ն որոշման համաձայն՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) խորհրդակցական մարմին է, որի հիմնական նպատակը՝ Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի, կոռուպցիայի հաղթահարման ուղղությամբ նախանշվող առաջնահերթությունների և առաջարկվող լուծումների

[10] Հանձնաժողովի անդամների ընտրության մասին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://iravaban.net/245553.html:

[11] Հանձնաժողովի անդամ Էդգար Շաթիրյանի հրաժարականի մասին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://iravaban.net/246720.html?fbclid=IwAR0vOMQUW1sTkdJriikNAKkSCLpCLjCEkHEz0XdP1k1w08-d7PDOsdNnD_I

քննարկումն է, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող քաղաքականությունների, ծրագրերի և իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշում հայտնելը: Հիշյալ որոշման ընդունումից հետո նախկինում գործող **Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը դադարեցրել է իր գործունեությունը** և, ի սկզբանե, տպավորություն էր ստեղծվել, որ վերակազմավորումից հետո այս **Խորհուրդը նոր ստեղծվող մարմին է լինելու, նոր լիազորություններով,** բայց իրականում այն էականորեն չի տարբերվում նախկինում գործող Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդից, ավելին, այս նոր Խորհուրդը իր կազմով և կարգավորումներով ռեգրես է հակակոռուպցիոն պայքարում՝ ստորև ներկայացվող հիմնավորմամբ: Այսպես, նոր Խորհրդում առանց որևէ հիմնավորման, նվազեցվել է **հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման հարցում ՔՀԿ-ների, տեղական ինքնակառավարման մարմինների և Հանրային խորհրդի դերը, քանի որ Խորհրդի կազմից դուրս էին մնացել Հանրային խորհուրդը, Կոալիցիան, Հայաստանի Համայնքների Միությունը:** Ավելին, հիշալ որոշմամբ **չի նախատեսվել Խորհրդում ներգրավվելու նպատակով մրցույթի կազմակերպում Կոալիցիաների համար**, ինչի վերաբերյալ սույն թվականի հուլիսի 3-ին տեղի ունեցած Կոալիցիայի կառավարման խորհրդի արտահերթ նիստի արդյունքներով Կոալիցիայի կառավարման խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ[12] նշելով, որ որևէ կերպ հիմնավորված չի եղել Խորհրդի կազմից Կոալիցիային արհեստականորեն դուրս թողնելու մոտեցումը, ուստի **Կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ կազմակերպությունները նպատակահարմար չեն գտնում ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ընթացակարգերով մասնակցել Խորհրդին ՔՀԿ-ների անդամության համար կազմակերպվող մրցույթին:** Միաժամանակ, անկախ խորհրդին անդամակցելու փաստից, Կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ կազմակերպությունները հայտնել են իրենց պատրաստակամությունը **այսուհետ նույնպես շարունակել աջակցել ՀՀ կառավարությանը՝ հակակոռուպցիոն քաղաքականությունների մշակման և բարելավման գործում՝ նպատակ ունենալով ապահովել կոռուպցիայից զերծ, ներդաշնակ, և երջանիկ հասարակության կառուցումը Հայաստանի Հանրապետությունում:**

Հարկ է ընդգծել նաև, որ Խորհրդի կազմում ՀԿ-ների ներգրավման համար հայտարարված մրցույթը կազմակերպվել է մի շարք խախտումներով: Այս մասին է վկայում www.iravaban.net անկախ լրատվական կայքի կողմից իրականացված հետաքննությունը[13]:

Այսպես, Որոշման իրավակարգավորումները թույլ չեն տալիս երկարացնել արդեն իսկ հայտարարված մրցույթի ժամկետը, սակայն ՀՀ արդարադատության նախարարությունը, առանց որևէ լիազորության, հետաձգել է մրցույթի ժամկետը 1 օրով: Հետաքրքրական է այն, որ մրցույթում հաղթող ճանաչված հայտեր ներկայացրած **6 կառույցներից 4-ը դիմել են հենց այդ երկարացված մեկ օրվա ընթացքում:** Նման պայմաններում ողջամտորեն առաջանում են հիմնավոր կասկածներ առ այն, որ հասարակական կազմակերպությունների և ՀՀ արդարադատության նախարարության միջև եղել է նախնական ոչ օրինական և ոչ իրավաչափ պայմանավորվածություն, և

[12] Տես հղում 4-ը:

[13] Հետաքննությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://iravaban.net/233713.html:

նախատեսված մրցույթի ժամկետի մեկ օրով երկարացումը պայմանավորված է եղել նախապես համաձայնեցված ՀԿ-ների մուտքը հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում ապահովելու նպատակով: Հետաքրքրական է, որ www.iravaban.net անկախ լրատվական կայքի կողմից իրականացված հետաքննության հրապարակումից հետո Խորհրդի կազմում ընդգրկված **«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն** դուրս է եկել Խորհրդի կազմից: Վերջինս, մյուս 3 ՀԿ-ների նման, իր հայտը ներկայացրել էր մրցույթի ժամկետը մեկ օրով երկարացնելու օրը: Հարկ է նաև նշել, որ հետաքննության վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունը հանդես չի եկել պաշտոնական պարզաբանմամբ: Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Կոալիցիան առաջարկել է ՀՀ վարչապետին՝ **վերանայել Խորհրդի կազմում ՀԿ-ների ներգրավման հայտարարված մրցույթի ոչ իրավաչափ և ոչ օրինական արդյունքները՝ հաղթող ճանաչված 4 ՀԿ-ների մասով, և հայտարարվի նոր մրցույթ՝ Խորհրդի կազմում պակասող 4 ՀԿ-ների ներգրավման նպատակով:** Հակառակ պարագայում, ստացվում է, որ հակակոռուպցիոն գործունեություն իրականացնող մարմինն իր աշխատանքների մեկնարկն արդեն իսկ տվել է իրավական ակտերի կոպիտ խախտումներով: Կոալիցիան Վարչապետին առաջարկել է վերանայել իր Որոշումը և հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին անդամակցելու նպատակով նախատեսել մրցույթ նաև Կոալիցիաների համար: